# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

3

«Իրավաբանական Լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2006թ. օգոստոս, թիվ 3


Եթե արդարություն գոյություն ունենար, ապա օրենքի ու իրավաբանների կարիք չէր լինի:
Ռ.ՇԵՔԼԻ



Հայաստանյան փաստաբանությունը թևակոխել է բոլորովին նոր՝ «զարգացման» փուլ: Փաստաբանների երկու խմբավորումների միջև շուրջ մեկ տարի տևած անիմաստ և անհասկանալի վեճը իր հանգուցալուծումը ստացավ: Բոլորը հանդարտվեցին և հասկացան, որ վիճելով և դատավորների դռներն ընկնելով փաստաբանական ինստիտուտը երբեք չի զարգանա. ոչինչ, որ այս հարցում մի փոքր օգնեց գործադիրը, երևի խորհրդային փաստաբանության ուրվականը դեռ որոշ ժամանակ շարունակելու է շրջել Հայաստանում: Բայց սա չէ կարևորը: Կարևորը միաբանությունն է, որով պետք է սկիզբ դրվի փաստաբանական ինստիտուտի կայացմանը և առաջընթացին: Իսկ կայացումն ու առաջընթացը պետք է սկսվեն փաստաբանական ինստիտուտի ներսից, որին հասնելու համար անհրաժեշտ է շուտափույթ լուծել հետևյալ չորս կարևորագույն հիմնախնդիրները.

- փաստաբանական ինստիտուտի ինքնամաքրում,
- փաստաբանական ինստիտուտի համալրում նոր սերնդի բանիմաց, բարձր բարոյական և կամային նկարագիր ունեցող մասնագետներով,
- փաստաբանների ինքնակրթում,
- փաստաբանական գործունեության զարգացման համար բարենպաստ իրավական դաշտի ձևավորում:

Հակառակ դեպքում՝ խոսել փաստաբանական ինստիտուտի զարգացման մասին, նշանակում է ուղղակի ոչինչ չասել:

## ԼՐԱՀՈՍ

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2006թ.-ի օգոստոսի 26-ին ԵՊՀ-ում ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից անցկացվել է ՀՀ փաստաբանների հավակնորդների որակավորման քննությունների գրավոր փուլը: Որակավորման քննություններին մասնակցելու համար դիմել էին 383 հավակնորդներ: Որակավորման քննություններին մասնակցելու իրավունք էին ստացել 346 հավակնորդներ, որոնցից 310-ը մասնակցել են ՀՀ փաստաբանների հավակնորդների որակավորման քննությունների գրավոր փուլին: Քննությունների գրավոր փուլը հաջողությամբ հանձնել են 192 հավակնորդներ, որոնք սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը՝ ըստ նախապես որոշված խմբերի, կմասնակցեն քննությունների երկրորդ՝ բանավոր փուլին: 42 հավակնորդներ, համաձայն չլինելով գրավոր փուլի արդյունքներին, գանգատարկել են դրանք:

### ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

2006թ.-ի օգոստոսի 14-ին ՀՀ Արդարադատության խորհրդի նիստում ՀՀ նախագահի ներկայությամբ տեղի է ունեցել նորանշանակ դատավորների երդման արարողությունը: Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը՝ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորներ Արմեն Խաչատրյանը և Ռաֆիկ Մելքոնյանը երդվել են արդարադատություն իրականացնելիս ենթարկվել միայն Սահմանադրությանը և օրենքներին, լինել անաչառ և սկզբունքային, արդարացի և մարդասեր, բարձր պահել պետության ու դատարանի հեղինակությունը:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ

2006թ.-ի օգոստոսի 7-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը աշխատանքային հանդիպում է ունեցել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Նախագահները քննարկել են դատահիրավական բարեփոխումների, ինչպես նաև դատական համակարգի գործունեությանը վերաբերող, վերջերս ԱԺ-ի ընդունած օրենսդրական փաթեթին առնչվող հարցեր: ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը հանդիպել է նաև լրագրողներին և ներկայացրել 2006թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ դատարաններում գործերի քննության վիճակագրական տվյալները: Մանրամասները՝ էջ 3-ում:

### ԱՅՑԵՔԱՐՏ

Միջազգային փաստաբանական պրակտիկան արձանագրում է, որ ազգային մակարդակով փաստաբանության զարգացման հիմնական ներուժն են հանդիսանում գործընկերության հիման վրա ձևավորված իրավաբանական ընկերությունները: Հայաստանում այս բնագավառը դեռևս կազմավորման փուլում է, ուստի Իրավաբանական Լրատուն այսուհետև պարբերաբար կներկայացնի այս բնագավառի առաջնեկներին, որոնցից է «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը: Մանրամասները՝ էջ 2-ում:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը 1997թ.-ից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառայություններ է մատուցում իր վստահորդներին: Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկերություններից մեկը, որը ռազմավարական և ապագային միտված մոտեցում է ցուցաբերում վստահորդների գործերի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակների ցանցը նրա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ընկերությունը ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնակ իրավաբանական ընկերություններից մեկը: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության վստահորդների գործնական խնդիրները նաև ընկերության խնդիրներն են:

## ԻՆՉՈ՞Վ Է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ

Ստեղծման պահից ի վեր ընկերությունը նպատակ է ունեցել ձևավորել վստահորդների հարգանքն ու վստահությունը վայելող կազմակերպություն, որը պատշաճ կերպով ներկայացնում է նրանց հետաքրքրություններն ու շահերը՝ միաժամանակ պահպանելով մասնագիտական գաղտնիության սկզբունքները: Ընկերության մասնակիցները և մասնագետները նվիրված են ստեղծագործ և կայուն որակ ապահովող աշխատանքին, ինչը հանդիսանում է ընկերության մասնագիտական հպարտությունը և նրա՝ որպես ընկերության հիմնական առանձնահատկությունը: Դիմելով «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության օգնությանը՝ վստահորդը ոչ թե ուղղակի փաստաբան է վարձում, այլ ստանում է միմիայն իր շահի և հետաքրքրությունների մասին մտածող փորձագետների մի ամբողջ խմբի օժանդակություն:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ընկերությունը իր վստահորդներին իրավաբանական ծառայություններ է մատուցում հետևյալ ոլորտներում.

- Աշխատանքային իրավունք,
- Առևտրային իրավունք,
- Ընտանեկան իրավունք,
- Ընտրական իրավունք,
- Կորպորատիվ իրավունք,
- Հարկային իրավունք,
- Միջազգային առևտրային իրավունք,
- Մտավոր սեփականություն,
- Սահմանադրական իրավունք,
- Սոցիալական իրավունք,
- Քաղաքացիական իրավունք:

legal alliance

**Կարեն ՋԱԴՈՅԱՆ**

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության կառավարող գործընկեր

**Վրեժ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության գործընկեր

**Կասյա ԱԲԳԱՐՅԱՆ**

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության գործընկեր

**Դավիթ ԱԲԳԱՐՅԱՆ**

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունում ՀԵԻԱ-ի լիազոր ներկայացուցիչ

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ընկերությունն ունի չորս մասնակից՝ Վրեժ Գասպարյանը, Կարեն Ջադոյանը, Կասյա Աբգարյանը և «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որի լիազոր ներկայացուցիչն է Դավիթ Աբգարյանը:

Վրեժ Գասպարյանը հայտնի է որպես հմուտ և ճկուն բանակցություններ վարող և դժվար հակառակորդ: Նրա աշխատանքնային գործունեությունը նշանակալի առաջընթաց է ունեցել այն ժամանակ, երբ նա դարձել է ՀՀ Նախագահի աշխատակազմի պետահիրավական վարչության պետ: Տարիների ընթացքում, երբ հանրապետությունը նոր օրենքներ էր ընդունում և հաստատում, Վրեժ Գասպարյանը վճռորոշ դեր է ունեցել վերջիններիս վերլուծության և դրանց վերաբերյալ ՀՀ Նախագահին խորհուրդներ տալու գործում:

Կարեն Ջադոյանը փաստաբան է և աշխատում է Հայաստանում: Նպատակ ունենալով օգնել և օժանդակել Հայաստանի իրավաբանական պրակտիկայում միջազգային չափանիշների ներմուծմանը, հաստատմանը ու ընդունմանը՝ նա աշխատել և համագործակցել է միջազգային ոչ կառավարական կառույցների հետ: Կարեն Ջադոյանը՝ որպես փաստաբան, իրավաբանական օգնություն և օժանդակություն է տրամադրել ինչպես մասնավոր ընկերություններին և ոչ կառավարական կազմակերպություններին, այնպես էլ հասարակության կարիքավոր խավերի ներկայացուցիչներին:

Կասյա Աբգարյանը իր փաստաբանական պրակտիկան իրականացնում է ԱՄՆ-ում: Որպես ընկերության մասնակից՝ նա իր ծառայություններն է առաջարկում Հայաստանից դուրս գտնվող այն վստահորդներին, որոնք իրավաբանական ծառայությունների և ներկայացուցչության կարիք ունեն Հայաստանում: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի առաջին պաշտոնավարման ընթացքում նա աշխատել է որպես ՀՀ Նախագահի խորհրդական:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին՝ որպես հասարակական կազմակերպություն, և միավորում է Հայաստանի նոր սերնդի շուրջ 200 երիտասարդ իրավաբանների, ովքեր կրթվել են իրավունքի բնագավառի նոր չափանիշների համապատասխան և գլխավորապես հանրապետության իրավական դաշտ են ներմուծում միջազգային փորձը:

## ԴԱՏԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2002թ.-ից մինչ այսօր Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին ՀՀ արդարադատության նախարարության դատաիրավական բարեփոխումների ԾԻԳ-ի միջոցով շահագործման են հանձնվել հետևյալ դատարանների շենքերը.

- Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարան,
- Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարան,
- Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարան,
- Երևանի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան,
- Արարատի մարզի առաջին ատյանի դատարան,
- Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան,
- Լոռու մարզի առաջին ատյանի դատարան (այս շենքում տեղակայված է նաև տնտեսական դատարանը),
- Շիրակի մարզի առաջին ատյանի և տնտեսական դատարան,
- ՀՀ վերաքննիչ դատարաններ և տնտեսական դատարան:

Վերազինվել է նաև դատարանների տեխնիկական հագեցվածությունը (մոտ 800.000 ԱՄՆ դոլարին համարժեք համակարգչային տեխնիկա, ձայնագրող սարքեր), դատարանների կահավորումը և դատարաններում աշխատակազմերի գործերի կառավարման համակարգը: Մինչև 2006թ.-ի նոյեմբեր ամիսը շահագործման կհանձնվեն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի, Շենգավիթ համայնքի առաջին ատյանի և Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանների շենքերը:

## ԻՐԱՎԱԲԱՆԻ ԿԱՐԾԻՔ

Մեզանում այսօր հաճախ է խոսվում արդար, անկախ դատարանների, նրանց կարևորության ու անհրաժեշտության մասին: Բնականաբար հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է ձևավորվի դատական համակարգի նկատմամբ հասարակության հարգանքն ու դրական վերաբերմունքը: Այն չափազանց կարևոր է, որի լուծման գործում բնականաբար մեծ դերակատարում ունեն հենց իրենք, ՀՀ դատարանները՝ հանձինս դատավորների և նրանց կայացրած վճիռների: Դեռևս հին ժամանակների հայտնի մտածող Ցիցերոնը նկատել էր, որ դատավորը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ համր դատավոր: Այս առումով շատ կարևոր է դատարանների կողմից օրենքների ճիշտ մեկնաբանումը և անշեղ կիրառումը, քանի որ, եթե միևնույն օրենքը տարբեր դատարանների կողմից, անկախ ժամանակահատվածից, մեկնաբանվում ու կիրառվում է ճշգրտորեն՝ օրենքի ոգուն և տառին համապատասխան, ապա տարիների ընթացքում այն հասարակության շրջանում տվյալ դատական համակարգի նկատմամբ սերմանում է հավատ, պատկառանք և վստահություն: Եվ հակառակը, անթույլատրելի է, երբ դատավորը նույնանման գործերով մեկ դեպքում կայացնում է մի վճիռ, մեկ այլ դեպքում՝ ամբողջապես այլ վճիռ (շատ դեպքերում միևնույն դատավորը)՝ հասարակության շրջանում ձևավորելով անվստահություն արդար և անկախ դատական համակարգ ունենալու հարցում: Այս առումով դրական քայլ պետք է համարել Վճռաբեկ դատարանի լիազորությունների սահմանների փոփոխությունը, որը ուղղված է ՀՀ-ում միասնական դատական պրակտիկայի կիրառմանը: Բարեփոխումների ճիշտ ու արդար իրականացումը կնպաստի ՀՀ-ում արդարադատության իրականացմանը և հասարակության շրջանում դատական համակարգի նկատմամբ հարգանքի և վստահության սերմանմանն ու ամրապնդմանը:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիայի անդամ, իրավաբան
Գևորգ Գյոզալյան

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2006թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 2184 քրեական գործ, որից 1503-ը քննվել է ըստ էության և կայացվել են դատավճիռներ, 57-ը կարճվել է, 15-ով անմեղսունակների նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 15-ը ուղարկվել է լրացուցիչ նախաքննության, 594-ը փոխանցվել է 2006-ի երկրորդ կիսամյակ: Դատապարտվել է 1879 մարդ, որից 60-ի նկատմամբ գործերը կարճվել են, 15 անմեղսունակի դեպքում կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 18-ի գործերը հանձնվել են լրացուցիչ քննության, 4 անձ արդարացվել է, որից 3-ը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանում, մեկը՝ Լոռու մարզում: Բողոքարկման ենթակա 1575 դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 417 վերաքննիչ բողոք՝ ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարան, որից 106-ը թողնվել է առանց բավարարման և 30 վճռաբեկ բողոք՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերի պալատ, որից 3-ը թողնվել է առանց բավարարման: 1128 դատավճիռ 2006թ.-ի առաջին կիսամյակում չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Քրեական գործերի վերաբերյալ առաջին ատյանի որոշումների 78,6 տոկոսի դիմաց կամ բողոք չի բերվել, կամ բերված բողոքները չեն բավարարվել: Վերաքննիչ դատարանի քրեական գործերի վերաբերյալ դատավճիռների կայունությունը կազմել է 67.1 տոկոս:

2006թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 29176 քաղաքացիական գործ, որից 20019-ով կայացվել են վճիռներ: 2181-ը թողնվել է առանց քննության, 6976-ը փոխանցվել է 2006-ի երկրորդ կիսամյակ: Կայացված վճիռներից 57-ը վերաբերում է ընտրությունների ընթացքում ընտրական իրավունքների պաշտպանության դիմումների վերաբերյալ գործերին: Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական վճիռների կայունությունը ավելի բարձր է՝ 87.8 տոկոս: Վերաքննիչ դատարանի քաղաքացիական վճիռներից չեն փոփոխվել 83.3 տոկոսը: Դատական համակարգում կայացված վճիռների կայունության ամենաբարձր ցուցանիշ ունի տնտեսական դատարանը՝ 93.3 տոկոս:

2006թ.-ի առաջին կիսամյակում արդարացվել է 4 հոգի, 2004 և 2005 թվականներին՝ յուրաքանչյուր տարի 6 հոգի: Արդարացվածների թիվը 0.04 տոկոս է կազմում, ինչը շատ ցածր է և չի կարելի դրական համարել: Համեմատության համար՝ ՀՀ դատական օրենսդրությանը բավական մոտ օրենսդրություն ունեցող Բելգիայում արդարացվածների թիվը մոտ 5 տոկոս է, Ռուսաստանի Դաշնությունում՝ մոտ 3 տոկոս: ԱՊՀ երկրներից այս իմաստով ամենից վատը Ղազախստանի իրավիճակն է, որտեղ ցուցանիշը 0.1 տոկոս է:

# ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՐՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային իրավական համակարգի միջուկը և շարժիչ ուժը սահմանադրությունն է, որի շուրջ են ձևավորվում իրավական համակարգի մյուս բաղադրիչները: Սահմանադրությունը՝ որպես իրավական կառուցակարգ (մեխանիզմ), հասարակական կյանքում իրագործվում է իրավական, պետական ինստիտուտների մի ամբողջ համակարգով, հասարակական իրավագիտակցությամբ և իրավակիրառ պրակտիկայում: Սահմանադրական նորմերի ճնշող մեծամասնությունը չունի իրացման սեփական մեխանիզմ (օրինակ՝ նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ և այլն): Այստեղ որպես կառուցակարգ հանդես է գալիս ողջ իրավական համակարգը, որի փոխկապակցված բաղադրամասերն ուղղակի կամ անուղղակի առնչվում են սահմանադրական նորմերի և սկզբունքների իրագործմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սա սահմանադրական նորմ-նպատակ է, որին ձգտում է սոցիալական առաջադիմության ուղին նախընտրած ազգային պետականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բովանդակում է մի շարք սկզբունքներ և դրույթներ, որոնց ներհատուկ է իրավական կարգավորման բազմամակարդակ բնույթը: Վերջինս իր հերթին ենթադրում է իրավական համակարգում սահմանադրական նորմերի իրագործման բազմամակարդակ գործընթաց: Այդ պատճառով էլ իրավական բարեփոխումների գործընթացում որոշակի խնդիրներ են առաջանում՝ կապված օրենսդրությունում և դատական ու իրավակիրառ պրակտիկայում սահմանադրական նորմերի փոխակերպման հետ: ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո ազգային սահմանադրական իրավունքի տեսությունում և պրակտիկայում սկսեց ձևավորվել զարգացման նոր ուղղություն, որը միտված է ընդարձակելու սահմանադրական նորմերի և սկզբունքների գործադրման սահմանները ազգային իրավական համակարգում: Արդի ժամանակաշրջանի ժողովրդավարական հասարակությունների զարգացման հիմնական միտումներից է նաև ներպետական իրավական համակարգի սահմանադրականացումը:

Այս առումով անհրաժեշտ է պարզել «սահմանադրականացում» երևույթի բովանդակությունը, նրա նշանակությունն ազգային պետականության և ողջ իրավական համակարգի համար:

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Համեմատական սահմանադրական իրավունքի տեսության մեջ սահմանադրականացումը մեկնաբանվում է որպես սահմանադրական նորմերի իրականացում և իրավական ու քաղաքական համակարգի վրա սահմանադրության ներգործության ապահովում: Սահմանադրականացումը սահմանադրության ուղղակի իրավաբանական ազդեցության հետևանք է և կարող է դիտարկվել որպես իրավական համակարգի վրա սահմանադրական նորմերի ներգործության կառուցակարգ:

Իրավական համակարգի սահմանադրականացման իրավական հիմքը Սահմանադրությունն է, որի նորմերն օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով՝ ողջ իրավական համակարգում: Հասարակության իրավական համակարգի սահմանադրականացման հիմնական պայմաններն են Սահմանադրության գերակայությունը, նորմատիվությունը և նրա նորմերի ուղղակի գործողությունը:

Սահմանադրորեն ամրագրելով Սահմանադրության՝ որպես պետության Հիմնարար օրենքի գերակայության սկզբունքը՝ երաշխավորվում է մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտոնական ճանաչումը, որի ուժով Սահմանադրությունը դառնում է անհատի ազատության, նրա իրավունքների իրացման երաշխավորը:

Սահմանադրական նորմերը որպես կանոն և առավել հաճախակի իրագործվում են իրավունքի զանազան ճյուղերի նորմերի հետ համատեղ: Դա պայմանավորված է նրանով, որ ոչ միշտ են սահմանադրական նորմերը բավարար Հիմնարար օրենքի դրույթների իրագործման համար: Սահմանադրությունն ամրագրում է միայն գլխավոր, հիմնարար սկզբունքները, սահմանում է քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, պետության գործունեության կազմակերպչական ու գործառութային հիմունքները: Դրանց իրականացումը ենթադրում է սահմանադրական նորմերի ձևափոխում սովորական օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում:

Սահմանադրական ընդհանուր հրահանգումների այդպիսի փոխակերպումը ճյուղային (քաղաքացիական, աշխատանքային, վարչական, քրեական և այլն) օրենսդրության լեզվով պետք է ուղեկցվի Սահմանադրության կարգադրագրերի կոնկրետացումով, մարդու հիմնական իրավունքները, ազատությունները ու պարտականությունները մանրամասնող ընթացիկ օրենսդրության միջոցներով, ինչպես նաև Հիմնարար օրենքի նորմերի իրականացման դատավարական ձևերի մշակմամբ: Սահմանադրական նորմերի կոնկրետացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիների իրավունքներին վերաբերող նորմերից

շատերը գործում են ճյուղային օրենսդրության միջոցով, ինչպես նաև այն բանով, որ հարկավոր է բարձրացնել իրավունքների ու ազատությունների իրագործման դատավարական ձևերի արդյունավետությունը: Բացի այդ՝ Սահմանադրությունը միշտ ընկալվում է որպես երկարատև գործողության իրավական փաստաթուղթ: Ընդունելով Հիմնարար օրենքի դրույթները կոնկրետացնող նորմատիվ ակտեր՝ օրենսդիրը հնարավորություն է ստանում ավելի լիարժեք կերպով օգտագործել նրա կարգավորիչ ու նաև քաղաքական, սոցիալական, բարոյական ներուժը՝ ի շահ հասարակական առաջընթացի:

## ՀԱՐՑԻ ԴՈԿՏՐԻՆԱԼ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Սահմանադրական դոկտրինայի մեջ ներկայումս հնարավոր է առանձնացնել համատեղ կիրառման ընթացքում Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության հարաբերակցության մի քանի գլխավոր ասպեկտներ:

Առաջինը Սահմանադրության ազդեցությունն է երկրում կատարվող նորմաստեղծ գործընթացի վրա: Կարելի է խոսել իրավական համակարգի վրա Հիմնարար օրենքի իրավակազմավորման աճող ազդեցության մասին: Սահմանադրությունն ուղղակիորեն նախատեսում է մի շարք օրենսդրական ակտերի ընդունում:

Երկրորդը իրավական համակարգում Սահմանադրության տեղի, ինչպես նաև նրա իրավաբանական ուժի հարցն է: Լինելով իրավական համակարգի հիմնական բաղադրիչը՝ Սահմանադրությունը կատարում է առաջատար դեր: Այն «օրենքների օրենքն» է, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և իրավաբանական բազա է ընթացիկ ամբողջ օրենսդրության համար: Այստեղից տրամաբանորեն բխում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական բոլոր անձանց, որոնց վրա տարածվում է պետության տարածքային գերակայությունը, պարտականությունն է պահպանել և պաշտպանել Հիմնարար օրենքը: Դա է սահմանադրական օրինականության, ընդունվող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը, նրա տառին ու ոգուն համապատասխանելու երաշխիքներից մեկը:

Սահմանադրական վերահսկողության կազմակերպչական ձև է Սահմանադրական դատարանը, որն օժտված է բավականաչափ համապատասխան իրավասությամբ:

Երրորդը հասարակական հարաբերությունների կարգավորման գործում Սահմանադրության և ընթացիկ օրենքների փոխգործողության հարցն է: Այն առաջատար դերը, որն իրավական համակարգում ունեն սահմանադրական իրավունքը և դրա հիմնարար աղբյուրը՝ Սահմանադրությունը, կանխորոշում ու պայմանավորում են այն գործառույթները, որոնք դրված են իրավունքի ճյուղերի վրա և կոչված են նախատեսել ու ապահովել սահմանադրական նորմերի իրագործման համար անհրաժեշտ և հուսալի կառուցակարգեր: Հասարակական հարաբերությունների ոլորտում չկա այնպիսի բնագավառ, որտեղ չարտահայտվի սահմանադրական նորմերի կարգավորիչ ազդեցությունը: Սակայն այդ հարաբերությունները կարգավորվում են նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերով: Ինչ խոսք, դա չի նշանակում ո՛չ Սահմանադրության ուղղակի և անմիջական գործողության բնույթի, ո՛չ իրավունքի այդ ճյուղերի արժեքի և դերի նսեմացում: Մենք ընդգծում ենք այն միտքը, որ սահմանադրական նորմերի իրագործման կառուցակարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրության և ընդհանրապես պետական իշխանության կողմից, այլև ճյուղային օրենսդրությամբ, ինչն իր հերթին անխուսափելիորեն հարց է ծնում այդ կառուցակարգերի սահմանների մասին:

Հիմնարար օրենքի իրագործման սահմանադրական կառուցակարգը գործում է դրա սուբյեկտների միջև հարաբերությունների բնականոն զարգացման ժամանակ: Որևէ շեղում առաջանալու դեպքում՝ դրա բնույթից կախված, գործի է դրվում նաև իրագործման ճյուղային կառուցակարգը (խախտված իրավունքի վերականգնում, պարտականության կատարման ապահովում և այլն):

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սահմանադրության խնդիրը չէ բոլոր հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այն ամրագրում է սահմանադրական կարգի հիմունքները, սահմանում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպման և գործունեության հիմքերը, ամրագրում պետական կառուցվածքը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, ինչպես նաև պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության կարգը:

Սահմանադրությունը աղբյուր է ազգային իրավական համակարգի սկզբունքների ձևավորման և դրանց նորմատիվ բովանդակության համար: Ընդհանրապես, իրավական համակարգի սկզբունքներն այն ելակետային ու հիմնարար դրույթներն են, որոնք կանխորոշում են հասարակության իրավական համակարգի էությունը, նորմատիվ բովանդակությունը, իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության բովանդակությունն ու բնույթը:

Սահմանադրությունը կարգավորում է հասարակության մեջ բախումների հաղթահարումը, կանոնավորում է քաղաքական միասնության կազմակերպման և ձևավորման գործընթացն ու պետության գործունեությունը, դրանով իսկ ապահովելով քաղաքացիական հասարակության ձևավորման հնարավորությունը, քանզի առանց քաղաքացիական միասնության հնարավոր չէ նախադրյալ ստեղծել քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Այդ իմաստով Սահմանադրությունը ստեղծում և նորմավորում է ընդհանուր պետահրավական ռեժիմի հիմքերը: Ընդհանուր առմամբ այն կշռադատված, որոշակի սկզբունքների վրա խարսխված, հասարակության կյանքի կանոնակարգման հիմնական իրավական ակտն է կամ, համենայնդեպս, այդպիսին պետք է լինի, քանի որ Սահմանադրությունը իրավաբանական փաստաթուղթ է, որի տառը, ոգին, նորմերն ու սկզբունքները կանխորոշում են իրավունքի սուբյեկտների վարքը: Եվ որքան շատ հասարակության անդամներ համաձայնեցնեն իրենց վարքը Սահմանադրության հետ, այնքան ավելի լիարժեք ձևով կարտահայտվի ժողովրդավարական ինստիտուտների ներուժը, ավելի հուսալի կլինեն ժողովրդավարության, ազատության և անձի իրավունքների իրականացման երաշխիքները:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
օրենսդրության վերլուծության և զարգացման
վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության
2-րդ դասի պետական խորհրդական
Վրեժ Գասպարյան

## ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Պատմության բոլոր ժամանակաշրջաններում պատերազմի մասնակիցների նկատմամբ տածվող հարգանքն ու մեծարանքը մարդկային վերաբերմունքի անփոխարինելի մասնիկն են եղել: Սակայն այսօր մեզանում այդ արժեքները հավուր պատշաճի չեն ընկալվում և կարևորվում: Սրա վկայությունն է վերջերս Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից 88-ամյա կենսաթոշակառու, Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից Անդրանիկ Գասպարյանին ցուցաբերված իրավաբանական օգնության պատմությունը:

2005թ.-ին Ա. Գասպարյանը դիմել էր դատարան ընդդեմ ՀՀ Զինվորական կոմիսարիատի՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին՝ խնդրելով դատարանից պարտավորեցնել ՀՀ Զինկոմիսարիատին ճանաչել իրեն Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից և կատարել կենսաթոշակի հետ կապված լրացուցիչ հաշվարկներ: 2005թ.-ի մայիսի 23-ին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, իսկ այնուհետև, 2005թ.-ի հոկտեմբերի 25-ին նաև ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը մերժեցին Ա. Գասպարյանի դիմումը: Տեսնելով, որ ինքնուրույն չի կարողանում իրականացնել իր խախտված իրավունքների պաշտպանությունը, 2005թ.-ին նոյեմբերի սկզբին Ա. Գասպարյանը դիմեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի անդամ, փաստաբան Լ. Հարությունյանի կողմից կազմված վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատը 2005թ.-ի դեկտեմբերի 16-ին որոշեց բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 25.10.2005թ.-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: Այնուհետև, 2006թ.-ի մարտի 1-ին ՀՀ

Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ Անդրանիկ Գասպարյանի դիմումի ընդդեմ ՀՀ Զինվորական կոմիսարիատի, պետական մարմնի անգործությունը վիճարկելու մասին, վճռեց դիմումը բավարարել՝ ճանաչել Ա. Գասպարյանին Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից և նրա կենսաթոշակի հետ կապված լրացուցիչ հաշվարկները կատարել 2000թ.-ից: Այս վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ 2006թ.-ի մարտի 16-ին:

Ներկայումս, ՀԵԻԱ-ի օգնությամբ, Ա. Գասպարյանը օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի կատարման համար ստիպված դիմել է Դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններին, քանի որ մինչ օրս ՀՀ Զինվորական կոմիսարիատի կողմից այն կամովին չի կատարվում: Վստահ ենք, որ վճռի կատարման փուլում Անդրանիկ Գասպարյանը վերջնականապես կունենա իր՝ Հայրենական Մեծ Պատերազմի մասնակցի պատվավոր վկայականը:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նոր ինստիտուտ է և այն Հայաստանում սկսել է գործել 2004թ.-ի սկզբից: Ըստ օրենքի՝ մարդու իրավունքների պաշտպանը անկախ է և չի ենթարկվում պետական և տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Մարդու իրավունքների պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով նախատեսված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

### 2005Թ.-Ի ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2005 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է 1551 գրավոր բողոք, որոնց դիմումատուների թիվը կազմել է 1824: Վիճակագրական տվյալները փաստում են, որ ստացված բողոքներից շուրջ 34 տոկոսից ավելին ընդունվել է քննարկման: Ստացված 1551 բողոքներն ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ունեցել են հետևյալ պատկերը.

1. Ոստիկանություն՝ 191
2. Սոցիալական ապահովության մարմիններ՝ 179
3. Դատարաններ՝ 166
4.Երևանի քաղաքապետարան՝ 139
5.Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ 146
6.Դատախազություն՝ 94
7.Արդարադատության նախարարություն՝ 93
8.Պաշտպանության նախարարություն՝ 72
9.Մարզպետարաններ՝ 73
10. Կադաստրի ստորաբաժանումներ՝ 50
11. Քաղաքապետարաններ (բացի Երևան քաղաքից)՝ 59
12.Միգրացիայի և փախստականների վարչություն՝ 49
13. Զրտնտպետկոմ՝ 19
14. Կրթության և գիտության նախարարություն՝ 22
15. Առողջապահության նախարարություն՝ 19
16. Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն՝ 9
17. Տրանսպորտի և կապի նախարարություն՝ 12
18. Հարկային պետական ծառայություն՝ 9
19. Քաղաքաշինության նախարարություն՝ 6
20. ՀՀ Կառավարություն՝ 9
21. Էներգետիկայի նախարարություն՝ 3
22. Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն՝ 3
23. Այլ՝ 129:

Վերը նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված բողոքների շարքում գերակշռում են ոստիկանության, դատարանների, դատախազության և արդարադատության նախարարության դեմ տրված բողոքները:

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Զարգացած իրավաբանական համակարգեր ունեցող երկրներում իրավաբանական ընկերությունների կառավարման համակարգերը տարբերվում են միմյանցից: Սակայն վերլուծելով արևմտյան եվրոպական երկրների և ԱՄՆ-ի այս բնագավառի փորձը՝ կարելի է առանձնացնել իրավաբանական ընկերությունների կառավարման մի քանի մոդելներ:

## ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման այս մոդելը բնորոշ է իրավաբանական ոչ մեծ ընկերություններին: Այս տեսակի ընկերություններում կառավարման վերաբերյալ որոշումներն ընդունվում են ընկերության բոլոր իրավաբանների կողմից՝ անկախ նրանց տարիքից և փորձից: Կառավարման այս մոդելի հիմնական խնդիրն այն է, որ բոլոր իրավաբանները քվեարկության ժամանակ ունեն հավասար իրավունքներ: Սակայն կառավարման այս մոդելը որդեգրած մի շարք ընկերություններում այս հարցի լուծման նպատակով ժամանակի ընթացքում կատարվել են որոշակի փոփոխություններ, ըստ որոնց, տվյալ ընկերությունում տարբեր կարգավիճակ ունեցող իրավաբաններ քվեարկության ընթացքում ստանում են տարբեր իրավասություններ: Օրինակ՝ ընկերության հիմնադիրները, փորձառու փաստաբանները, որոնք ապահովում են ընկերության հաճախորդների հիմնական հոսքը, քվեարկության ժամանակ ունեն ավելի լայն իրավունքներ, քան մյուս իրավաբանները: Այս ամենի հետ մեկտեղ՝ ընկերությունում ոչ երկար ժամանակ աշխատող, ինչպես նաև ընկերությանը ոչ մեծ եկամուտ բերող երիտասարդ մասնագետների իրավունքները սահմանափակվում են և նրանց տրվում են ավելի սահմանափակ իրավասություններ:

## ԳՈՐԾԱԴԻՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ՄԱՐՄԻՆ

Ընկերությունների գործունեությանը վերաբերող վարչական հարցերի լուծումը պահանջում է շատ ժամանակ: Այդ պատճառով այն իրավաբանական ընկերությունները, որոնք կազմված են հինգ և ավելի գործընկեր (մասնակիցներ) փաստաբաններից, նախընտրում են ընտրել գործադիր կառավարման կոլեգիալ մարմին՝ վարչական կոմիտե, որի հիմնական խնդիրն է հանդիսանում իրավաբանական ընկերության ամենօրյա գործունեության կառավարման հետ կապված հարցերի լուծումը: Վարչական կոմիտեն ընտրվում է 1-ից մինչև 3 տարի ժամկետով՝ կոմիտեի անդամների ամենամյա ռոտացիայի սկզբունքով: Կոմիտեն իր կատարած և կատարվելիք աշխատանքների մասին պարբերաբար զեկուցում է գործընկերների ընդհանուր ժողովին:

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Իրավաբանական ընկերությունների կառավարման երրորդ մոդելը կառավարման պարտականությունների բաշխումն է ընկերության բոլոր գործընկեր փաստաբանների միջև: Օրինակ՝ մի փաստաբանը որոշում է ընկերության գրասենյակի կազմակերպչական հարցերը, մյուսը պատասխանատվություն է կրում վստահորդների ներգրավման ու նրանց մատուցվող ծառայությունների համար և այլն: Ընկերության կառավարման այս մոդելի դեպքում գործընկերները իրենց աշխատաժամանակի միայն մի փոքր մասն են հատկացնում ընկերության կառավարման հարցերին և ավելի շատ ժամանակ են ունենում իրավաբանական պրակտիկայով զբաղվելու համար: Ամենակարևոր որոշումները ընդունվում են ընկերության ընդհանուր ժողովի կողմից:

## ԿԱՌԱՎԱՐՈՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս ընկերության կառավարման ամենաարդյունավետ մոդելը համարվում է ընկերության գործընկեր

փաստաբաններից մեկի ընտրությունը կառավարող գործընկերոջ պաշտոնում: Կառավարող գործընկերը լիազորվում է ընդունել ընկերության բոլոր վարչական որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք մտնում են գործընկերների ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունների մեջ: Քանի որ կառավարող գործընկերը որոշում է ընկերության կառավարման բոլոր հարցերը՝ ընկերության մյուս գործընկերները ազատվում են կառավարման պարտականությունների կատարումից և զբաղվում են իրավաբանական պրակտիկայով: Կառավարման այս մոդելի դեպքում կառավարող գործընկերը ավելի քիչ ժամանակ է ունենում իրավաբանական պրակտիկայով զբաղվելու համար: Կառավարման այս ձևում կիրառվում է նաև կառավարող գործընկերոջ ռոտացիոն փոփոխության սկզբունքը:

## ՄԻԱՆՁՆՅԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կառավարման այս մոդելի օգագործումը ենթադրում է ընկերության բոլոր վարչական ռեսուրսների կենտրոնացում մեկ փաստաբանի ձեռքում: Այս ձևը օգտագործվում է այն դեպքերում, երբ առաջատար մեկ փաստաբան հիմնում է ընկերություն, իսկ մյուս իրավաբանները աշխատանքի են ընդունվում այդ հիմնադիր փաստաբանի մոտ: Ինչպես բոլոր տոտալիտար համակարգերում, այս դեպքում նույնպես հաջողությունը մի կողմից կախված է միանձնյա կառավարողի բարյացակամությունից, իսկ մյուս կողմից՝ ենթակաների նպատակամղվածությունից: Այս ձևը հաջող կիրառվում է, երբ առաջատար փաստաբանը արդար է կառավարում և հարգալից է վերաբերվում իր կոլեգաներին, որոնք էլ համաձայնվում են մնալ առաջատար փաստաբանի ստվերում: Կառավարման այս ձևի թերությունը կադրերի արտահոսքն է, քանի որ որոշ ժամանակ ընկերությունում աշխատելուց հետո փաստաբանները նախընտրում են հեռանալ՝ ընկերության կառավարման մեջ չունենալով ձայնի իրավունք:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Իրավաբանական ընկերությունների կառավարման մոդելներն ու ձևերը կարող են լինել անթիվ ու անհամար: Յուրաքանչյուր կոնկրետ ընկերության պահանջմունքներից կախված՝ կարող են մշակվել իրավաբանական ընկերությունների կառավարման հինգ հիմնական մոդելերի կոմբինացիաներ և տարբերակներ:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ»
իրավաբանական ընկերության կառավարող
գործընկեր, փաստաբան
Կարեն Զաղոյան

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Դատավոր - Դուք այդ ինչպե՞ս եք հրաժարվում նախաքննության ժամանակ տրված ձեր ցուցմունքներից: Ինչու՞:
Ամբաստանյալ Որովհետև պարոն փաստաբանն ինձ լրիվ համոզել է, որ ես ոչ մի բանում մեղավոր չեմ:

---

ԱՄՆ-ի Օկլահոմայի նահանգի դատարանում դատավորը հարցնում է ամբաստանյալին:
- Իսկ այժմ մեզ մանրամասն պատմեք, թե դուք ինչպե՞ս եք թալանել բանկը:
- Չեմ կարող, - պատասխանում է ամբաստանյալը, - ախր դահլիճում են գտնվում իմ բոլոր մրցակիցները:

---

- Ինչպե՞ս ես քեզ զգում ապահարզանից հետո:
- Վատ: Ավտոմեքենան, որ ես էի գնել, դատարանը տվեց իմ նախկին կնոջը, իսկ երեխաներին, որոնք, հնարավոր է, որ նույնիսկ իմը չեն, դատարանը հանձնեց ինձ:

---

Չիկագոյում օրենսդրությունն արգելում է գրկել սեփական հարևանուհուն՝ առանց նրա համաձայնության:
Լոս Անջելեսում չի կարելի տանը պահել գետաձի:
Կալիֆորնիայի նահանգի օրենքներով մկան թակարդից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ մուկ բռնելու թույլտվություն:
Օքսֆորդում Արկանզաս նահանգի տղամարդիկ կարող են բացեիբաց ծեծել իրենց կանանց, սակայն ամիսը մեկ անգամից ոչ հաճախ:

---

Աթենքի կառավարիչ Սոլոնի օրենքով պետության պաշտոնատար անձինք առաջին անգամ նկատված հարբեցողության համար ենթարկվում էին խոշոր տուգանքի, իսկ երկրորդ անգամ՝ մահապատժի:

---

Մեծ Բրիտանիայի համայնքների պալատում, երբ քննարկվում էր հասարակաց տների մարմնավաճառների իրավունքների պաշտպանության օրինագիծը, ոմանք կասկածում էին, թե կընդունվի՞ արդյոք այդ օրինագիծը: Վճռական խոսքն ասացին հենց իրենք, հնագույն արհեստի ներկայացուցիչները: Նրանք պահանջեցին, որ իրենց իրավունքները հավասարեցվեն սպասարկման ոլորտում աշխատողների իրավունքներին և հայտարարեցին, որ օրինագիծը մերժելու դեպքում կհրապարակվեն այն օրենսդիրների անունները, որոնց «բավականին լավ են ճանաչում»: Օրինագիծն ընդունվեց: Պալատի անդամներից 130-ը քվեարկեցին կողմ և միայն 50-ը՝ դեմ:

---

«Լինելով հարբած վիճակում՝ քաղաքացի Հ.-ն շփոթել է իր կնոջը նրա քրոջ հետ, որի հետևանքով ծեծել է վերջինիս՝ պատճառելով նվազ ծանր մարմնական վնասվածք»:

(դատավճռից)

---

«Արգելվում է կազմակերպությունների և հասարակական միավորումների անվանումներում «Փաստաբան» բառի և դրա բոլոր հոլովաձևերի տրամադրման մերժումը՝ ելնելով վերջիններիս սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական և սոցիալական բնույթի հանգամանքներից»:

(կարգից)

---

«Բ.-ն իր տան վրա գրանցել է փեսաներին և աղջկան ու երեխաներին՝ սիստեմատիկաբար ծանրաբեռնելով ընդհանուր օգտագործման տեղերը»:

(վճռից)

---

«Վնասի հատուցումը ձեռքի և կողոսկրի հարցում հաստատել, գլխի հարցում հաստատել մասնակիորեն»:

(վճռից)

---

«Այս քաղաքացու ոչխարը կորել է, որը իմ մոտիկ ազգականն է: Նա իմ կնոջ հարազատ քույրն է»:

(վկայի ցուցմունքից)

---

«Գողացված խոզի չորս ոտքերը հետազոտելուց հետո մեղադրյալը դատարանում հայտարարեց, որ դրանք իր զոքանչինն են»:

(ակտից)

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
ֆաքս՝ (374 10) 58-02-99
Էլ.փոստ՝ ega e e e @a a.a

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝

03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

**«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ**

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
31.08.2006թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից